ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 104 -Ա

31 հունվարի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ՌՈՒԲՌՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի Նոյեմբերի 17-ի 199-Ն որոշման առաջին կետի թիվ 1 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «ՌՈՒԲՌՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը՝ **որոշում եմ**

1. « ՌՈՒԲՌՈՒՍ »(ՀՎՀՀ 05500188) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 55փ./1 հասցեում սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն 2023 թվականի համար:

2. Հաստատված թույլտվությունը սահմանված ժամկետում հայտատուին հանձնել միայն տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրը ստանալուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

31 հունվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան